ՀԱՍՑԷ
M. ARCHAM
Poste Restante
ATHÈNES (Grèce)

# ՄԻՈՒԹԻՒՆ

ԲԱԺՆԵԳԻՆ
Տարեկան ֆրանք 4
Վեցամսեան » 2
Կանխիկ վճարելի

## ԱՄՍԱԹԵՐԹ

ՕՐԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Դ. ՏԱՐԻ ԱԹԷՆՔ 1/13 ՅՈՒԼԻՍ 1899 ԹԻՒ 34

## ՄԻՆԱՍ ՁԵՐԱՁ

### Ի ԼԱ-ՀԷՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԱԾՈՂ ՀԱՅ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ

Պ. Մինաս Զերազի անունը բոլոր հայերու և ոչ-սակաւ օտարազգիներու ի վաղուց ծանօթ ըլլալով, անշուշտ պէտք չունի մեր պաշտպանողականին։

Պ. Մինաս Զերազ իւր մանկութեան օրէն ազգին նուիրուած երդուեալ զինուոր մ'է, որ մինչև այսօր հաստատամտութեամբ անթերի կը շարունակէ կատարել իր պարտականութիւնը, առանց դադարիար կամ սկզբունք փոխելու։ Այս հաւատարիմ Զինուորը՝ իր հանրային բազմամեայ գործունէութեան մէջ՝ երբէք ամենափոքր արատ մը բերած չէ իր անունին. միշտ ուղիղ, պարկեշտ, անկեղծ եւ անշահախնդիր գործիչ մը եղած է։

Թէպէտեւ գտնուեցան երբեմն այնպիսիներ, որոնք եսամոլութեան հաճոյքէն դինովցած կամ վատ նախանձէ թելադրուած՝ պահ մը փորձեցին անոր վարկը ստորնացընել, բայց ատոնք աչնան տերեւներու պէս քամիի սաստկաշունչ հովին դէմ ջարդ ու փշուր ինկան գետին ու փոշիներու հետ խառնուած շուտով անհետացան, ճիշդ թըրքական այն ասացուածին պէս թէ՝ Եալանճընըն մումու եաթսըյա դատարեանար։

Ազգ. Մեծ-Գործիչը՝ աչքերը միշտ յառած դէպի Եւրոպական դիւանագիտութիւնը, հեռատեսութեամբ կը դիտէ ուշի ուշով. երբ կը տեսնէ թէ քաղաքական ինչ ինչ հանգամանքներէն ազգը կրնայ օգտուիլ, ազգային դատը պաշտպանելու առիթը երբէք ձեռքէ չի փախցուներ։ Վեհափառ Հայրիկի հետ Պերլինի Վեհաժողովին ներկայ գտնուեցաւ, ուր ստորագրուեցաւ պետութեանց կողմէ 61րդ յօդուածը, որ Հայաստանի մէջ բարենորոգումներ մտցնել կը տրամադրէր։ Բարենորոգմանց ծրագրի գործադրութիւնը ընդ երկար ձգձգուելէն ետ. Զերազ համոզուեցաւ որ Հայ Ազգը դահիճ սուլթանի խարէյութեան զոհ գացած է, ճարահատեալ թողուց Կ. Պոլիսը զոհելով իր փափուկ պաշտօնն ու հանգիստ կենցաղը, գնաց Եւրոպոյ արեւմտեան խոնաւ երկիրը՝ Լոնտոն, ուր հիմնեց l'Armenie թերթը, եւ ազատամտօրէն ձայն բարձրացուց։ Եւրոպոյ եւ Ամերիկոյ զանազան քաղաքները շրջելով հրապարակախօսութեամբ Հայաստանի անտանելի վիճակը, եւ բարբարոս Թուրքի ի գործ դրած վայրագութեանց, կոտորածներու եւ աւերակներու նկարները մոգական լապտերներով պարզեց քաղաքակիրթ աշխարհի առջեւ, որուն մարդասէր դասակարգին մէջ անկեղծ համակրանք մը ստեղծեց դէպի հայութիւնը։

Իսկ այս անգամ պ. Զերազ ըստ իւր հին սովորութեան ամեն ջանք ի գործ դրաւ ու անհաւատալի ճարպիկութեամբ յաջողեցաւ Պալքանեան հայերու յիշողագիրը ներկայացնել Լա-Հէյի Դեսպանաժողովին, եւ հակառակ Թուրք պատուիրակներու ըսպառնալեաց կատարեց իւր հրապարակախօսութիւնները Ամսթէրտամի մէջ։

Պ. Զերազի նկարագիրը հոս պատկերացնելով նպատակնիս անոր անուան շողոքորթութիւններ շռայլելէ, այլ հրաւիրել մեր միամիտ ժողովուրդին որ լաւ ճանաչէ իր գործիչները, իւրաքանչիւրի արժանիքը իր գործերէն դատելով։ Երբ ունենանք այս գիտակցութիւնը շուտով պիտի տեսնենք որ մեր բաղձանքները պսակուած են։

Ուրեմն, կեցցե՛ն անկեղծ գործիչները, եւ անկցի՛ն կեղծ ու պատիր ազգամոլաս ազգասէրները։

# Դ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

«Միութիւն»ը իր երրորդ տարեշրջանը բոլորած՝ ներկայ թիւով կը թեւակոխէ չորրորդ տարեշրջանին, դժբաղդաբար առանց շօշափելի արդիւնք մը առաջ բերելու։ Ի հարկէ ընթերցողը պիտի հարցնէ մեզ թէ՝ ինչո՞ւ։ Մենք կը պատասխանենք, այո՛, չի յաջողեցանք (1) ի՞նչ ընենք կամ բաղդը չի յաջողեց կամ Աստծը. չի կամեցաւ։ Եթէ չենք խաբուիր, մենք լիովին պարտականութիւննիս կատարած ենք այդ խնդրոյ մէջ. ո՛չ նիւթական ոյժ, եւ ո՛չ ալ ֆիզիքական աշխատութիւն խնայեցինք, ամեն միջոցներու դիմեցինք եւ ամեն ջանք ի գործ դրինք հանրութեան բաղձացեալ Միութիւնը կամ Համերաշխութիւնը մօտալուտ ժամանակի մէջ իրականացած տեսնելու։ Բայց մենք ի՞նչ ընենք, բաղդը ի՞նչ ընէ, եւ Աստծ. ի՛նչ ընէ, երբ ունինք ժողովուրդ մը՝ այնքան սպիկար, այնքան միամիտ, որ կարդ մը Թունաւորիչ սողուններու արտաքին փայլերէն հրապուրուած, կառնէ իր ծոցոյն մէջ, կը խնամէ ու կը սնուցանէ, առանց մտքէն իսկ անցնելու թէ՝ ինք թունաւորուա՛ծ է, վտանգը գլխուն վրայ սուրի պէս կախուած, մահամերձ վիճակի մէջ կը գտնուի։ Իբր եղբայր եթէ զգուշացնես զինքը այդ օձերու վտանգէն, կելլէ գրպարտիչ բախտախնդիր եւն. կանուանէ քեզ ու կը հայհոյէ։ Ուրեմն այս պարագային մէջ ո՞վ է մեղաւորը, երբ Միութիւնը չի յաջողիր։ Ի՞նչ ընենք մենք երբ կը տեսնենք խարդախ, կեղծաւոր շողոքորթներու խմբակ մը, որ ասպարէզ եկած Եւրոպայի փառաւոր երկիրներուն մէջ հանգիստ կեանք մը վարելու համար, ազգասիրութեան քողին տակ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ անուն մը մէջտեղ նետած այս ու այն բարեմիտ հայը կը խաբէ ու դրամներն կառնէ։ Առանց հիւլէի մը չափ օգուտ ունենալու ազգին, բացի վնասէն։ Ուրեմն ինչո՞ւ համար իբր մարդ կապրինք այս լուսաւորեալ դարուս մէջ եւ ի՞նչ կը նշանակէ մեր գոյութիւնը։ Եթէ միշտ այդպէս պիտի մնանք մե՛ղք հազար մեղք այն հացին որ մենք կուտենք։ Մոռցանք ըսելու թէ՝ մենք ի՛նչ ընենք միութեան անյաջողութեանը համար, երբ կը տեսնենք կարգ մը հացկատակ հրապարակագիրներ (բացառութիւնները յարգելի են) որոնք հայրենասիրութեան դիմակին տակ ծածկուած իրենց թերթերով ու հանդէսներով հրապարակ կը նետուին ու հացի համար կը շողոքորդեն այն կողմը, յորմէ քանի մը բաժանորդներ աւելի ունին կամ ունենալ կը յուսան։ Այդ ալ տեսակ մը դաւաճանութիւն չէ՞։ Վերջապէս մեր ղայրոյթը չենք կարող զսպել անոնց դէմ, որոնք հացի, փառքի եւ եսի համար ազգասէր հռչակեցին զիրենք, Միութեան գաղափարին առջեւ խոչնդոտներ յարուցին ու խեղճ հայութիւնը իր այսօրեայ վիճակին հասուցին։ Ասոնք են ազգին բացարձակ թշնամիները, նախ ասոնցմէ վրէժ լուծելու է ապա թուրքէն։

Ստոյգ է թէ գայլերու վոհմակի մը առջեւ կը գտնուինք այժմ, բայց մենք հոգի ի բաժին պիտի մարտնչինք, այո՛. պիտի մարտնչինք թէ՛ շուներուն եւ թէ՛ գայլերուն հետ, մինչեւ որ խեղճ հայութեան Սուրբ Գործին ղեկը տեսնենք անկեղծ ճշմարիտ հայրենասէրներու ձեռքը։ Ահա այս է եւ միշտ այս պիտի լինի մեր սկզբունքն ու ուղղութիւնը։

(1) Յաջորդ համարով մասնաւոր յօդուածով մը պիտի խօսինք մեր անյաջողութեան պատճառներու մասին։

# ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

«Միութիւն»ի հրատարակութիւնը երեք տարիէ ի վեր կը շարունակուէր մեր անհատական ծախքերով եւ նոյն դրութեամբ պիտի շարունակուէր միշտ, եթէ մեր բաժանորդներէն շատերը եւ գործակատարներէն ոմանք իրենց պարտականութեանց մէջ թերի չ'գտնուէին. բայց ցաւալի է խոստովանիլ մեզ թէ՝ թերթերու եւ Զինանշաններու փոխարժէքին մէկ չորրորդը ձեռքերնիս անցած չըլլալով մեր նիւթական ոյժերը սպառած, ճարահատեալ հարկադրուած էինք թերթի հրատարակութիւնը դադրեցնել։ Բարեբաղդաբար արտասահմանի մեր գաղափարակիցներէն հինգ ընկերներ մեզ հետ միանալով խմբագրական վարչութիւն մը կազմեցին թերթին գոյութիւնը պահպանելու համար։

Վարչութիւնը կազմող ընկերները եւ ո՛չ մի կուսակցութեան չեն պատկանիր, բոլորովին չէզոք եւ անձնուէր յեղափոխականներ են, որոնց մէկը առաջիկայ Սեպտեմբերին տեղս կը հաստատուի խմբագրութեան մէջ աշխատակցելու համար։

«Միութիւն»ի խմբագրական նոր վարչութիւնը՝ Միութիւնը կամ Համերաշխութիւնը յաջողցնելու շատ մը ծրագիրներ ունի, զորս հետզհետէ պիտի ներկայացնէ հայ հասարակութեան։ Նոր վարչութեան նշանաբանը պիտի ըլլայ «անկողմնակալութիւն եւ անաչառ քննադատութիւն,» ազգային շահերուն վտանգողներուն եւ ոչ մէկին պիտի խնայէ ով որ ալ լինի, եւ որ կուսակցութեան ալ պատկանի։

Ի գիտութիւն «Միութիւն»ի յարգելի ընթերցողաց չի մոռնանք այժմէն յիշել սա կարեւոր կէտը թէ՝ պ. Արփիարի եւ իր պնակալէզ արբանեակներու գաղափարին հետ երբէք չենք կարող հաշտուիլ, քանի որ շատ մօտէն քննած ու խղճի հանդարտութեամբ ի վաղուց համոզում գոյացուցած ենք որ սկիզբէն մինչեւ այս պահուս պ. Արփիար իսկ ՄԻԱՑՆ եղած է Միութեան իրականացումը արգիլող եւ միանգամայն երկու կուսակցութեանց միջեւ երկպառակութեան սերմներ ցանողը. ուրեմն զինքը պաշտպանող ու իր ազգադաւ արարքները ջատագովող յօդուածներ չպիտի հիւրընկալուին «Միութիւն»ի էջերուն մէջ։

«Միութիւն»ի 15 օրը մի անգամ հրատարակուիլը, թէեւ խմբագրութեան ալ նիւթապէս աւելի օգտակար կը լինէր, քանի որ թերթը արտասահմանի մէջ հատով կը ծախուի բաւական թիւով, սակայն նիւթականէն աւելի բարոյականը պէտք է մեզ։ Միութեան գաղափարին զօրաւոր մղում մը տալու բաղձանօք որոշած ենք յարատեւ թղթակցութիւն մը հաստատել նորակազմ Հնչակեան մասնաճիւղերու եւ Դաշնակցականաց պիւռօներու ու կոմիտէներու հետ, որպէս զի յաջողինք արտասահմանի մէջ խառն ժողով մը գումարել եւ միանգամ ընդ միշտ վերջ տալ «ըսի ըսաւ»ներու, որով միայն կարելի կը լինի հիմնական Միութիւն մը կամ Համերաշխութիւն մը առաջ բերել։

Որովհետեւ այսպիսի գործոյ մը յաջողութիւնը ծանր աշխատութիւններու կը կարօտի, որոշած ենք ամիսը մի անգամ հրատարակել «Միութիւն»ը նոյն ուղղութեամբ եւ նոյն բաժնեգինով, այսինքն տարեկան 4 եւ վեցամսեայ 2 ֆրանքով։ «Միութիւն»ի չորրորդ տարեշրջանի առաջին թիւն է այս, որ կը ղրկուի «Միութիւն»ի բոլոր հին բաժանորդներուն, նոյն իսկ անոնց, որք ցարդ իրենց բաժնեգինը անվճար թողած են։ Ամեն անոնք որ առաջին թերթը յետ չեն վերադարձներ բաժանորդ կը նկատուին, հետեւապէս բաժնեգինն ալ վճարել կը պարտին, իսկ անոնք՝ որ ո՛չ թերթը կը վերադարձնեն եւ ո՛չ ալ բաժնեգին կը ղրկեն, հրապարակաւ պիտի պախարակուին։

Որովհետեւ նոր վարչութիւնը նախորդ խմբագրութեան

պարտքերն ու պահանջները ինք ստանձնած է։ Կը խնդրէ յարգելի պարտաւորներէն որ հաճին մինչեւ Սեպտեմբերի 15ին Թերթերու եւ Զինանշաններու հաշիւները մաքրել, հակառակ պարագային Հոկտեմբերի Թիւէն սկսեալ յականէ յանուանէ հետզհետէ պիտի հրապարակուին զեղծանողներու անունները։

«Միութիւն»ի յաջորդ Թիւը լոյս կը տեսնէ Օգոստոսի սկիզբը։

Խմբագրութիւն «Միութիւն»ի

# ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է

Լաւագոյն փորձառութիւններով հաստատուած մեծ և ընտիր ասացուածներու մէկն ալ յառաջ կը բերենք կըրկնելով, թէ՝ «Միութիւնը Զօրութիւն է»։

Այո՛, ամէն հանրային կամ հասարակական գործերու նկատմամբ երբ խնդիր յարուցուած է, նոյն ատեն նաև խօսուած են այս գեղեցիկ խօսքերը, հետևաբար, մենք ևս պէտք կունենանք չեշտելու որ, ուր տեղ միութիւն՝ հոն յառաջդիմութիւն, իսկ ո՛ւր անմիութիւն՝ հոն յետադիմութիւն։

Կարծեմ չենք կարող ուրանալ, որ միութիւնը գրկել ուզող և յառաջդիմութեան ձգտող ամէն ժողովրդի համար մեծ դաս մը կրնան հանդիսանալ այն ամէն անկողմնակալ ուղղութիւնները որ համերաշխ գործակցութեան գծով կ՚ընթանան, մինչ դիտած ենք որ, ո՛ և է երկրի մը մէջ բնակող հայ ժողովրդեան շուրջը երբ կը դառնայ դըպրոցի կամ վարժապետի, Թաղականի կամ հոգաբարձուի, Եկեղեցւոյ կամ քահանայի խնդիր՝ անպատճառ ժողովրդական ընդհ. գումարում մը անհրաժեշտ կը նկատուի, որպէսզի իւրաքանչիւր ազգային անհատ իւր կարծիքը և հաւանութիւնը առաջ բերէ և անկէ ծնած լաւագոյն կարծիքներու որոշմամբ ընտրութիւն լինի, այսպէս ալ ներկայ դարու հայերս մինք յղացանք մեր արդի կացութեան տագնապալից վիճակը յեղաշրջել ստրկութենէ դէպ ի ազատութիւն, յետադիմութենէ դէպ ի յառաջդիմութիւն հասնելու միակ սկզբունքով, և մեր այս գործին իրական նըպատակը ոչ այլ ինչ պիտի լինէր, եթէ ոչ վերստանալ այն իրաւունքները զոր քաղաքական ձախորդ հանգամանքներ մեզ զրկեր էին և մինչև ցարդ զրկած են. Հետևաբար՝ հայ ազգի այս ճակատագրական ամենամեծ խնդիրը որ հայութեան հոգին ու կեանքն է, պէտքը չէ՞ր որ նախ քան ամէն անհատական և կողմնակի մտածումներ ի նկատի առնելու լուրջ կերպով զբաղուէր մտքերի ընդհ. միացման գործին վրայ և այս լինէր առանց սեռի բացառութեան որով մենք մեր սիրուն միութեան այս ձևովը միայն պիտի կրնայինք կապուիլ քանի որ մեր ապրած երկիրներու գիրքն ու դրութիւնը մեզ չէր թոյլատրեր դժբաղդաբար աւելին ընելու, և ես ամենայն վստահութեամբ կ՚սեմ թէ, եթէ մեր գործիչները անկեղծօրէն ճանաչէին իրենց ըստանձնած կոչումը և խել մը կուսակցամոլութեանց մարմնացումէն առաջ դնէին մտքերու մէջ միութեան մարմնացումը, այն ատեն հաւատացէ՛ք, որ, հայրենիքի ազատութեան սիրով տոգորեալ Հնդկաստանի վայրենի անկիւններուն մէջ ապրող հայն իսկ՝ մտքով միացած պիտի տեսնէինք երկիրներու ամենահեռաւոր վայրերուն մէջ մեծացող տգէտ շինականին հետ. ուրեմն, ինչո՞ւ մեր ազգասէր գործիչները չ՚աշխատեցան միացնել ժողովուրդի երկսեռ ուժը իրենց գործող ուժին հետ, և փոխանակ միացած ուժի մը շրջանակին մէջ և կամ հանրային գոյն ունեցող անուան մը տակ գործելու՝ եղան զանազան անուններ ըստեղծեցին և այդ անուններու տարածման ու ծաւալման խնդրոյն մէջ բոլորովին անմիտ մրցումներ գոյացան իրար դէմ, և այդ մրցումները տեղի տուին բաժան կուսակցութիւններու միջև, որմէ ծնաւ ցուցամոլութիւն, եսասիրութիւն՝ և կարգ մը վնասակար գործեր, և ահա այսպէս, ամեն մէկը իր ընտրած ուղղութեան շուրջը երևակայած ոսկի յոյսերուն շլացումէն շփոթուելով շատ կանուխ շարունակեց իր ճամբան, այնպէս որ մինչև եկաւ հասաւ այնտեղ, ո՛ւր բացուած տեսաւ անմեղ հայերու Թանկ արեան հոսանքը, այս ըսելով չեմ ուզեր հասկցնել թէ ինչո՞ւ Թափեցինք արիւն, փոխել չի հասկնանք իրար, այլ կ՚սեմ թէ, ինչո՞ւ խելքով, միացած ուժով չի գործեցին որ Թափուած արիւնը օգուտ մը բերեր մեզ, ինչպէս բերեց Կրետացւոյն. միթէ մտածող խելքերի համար նուա՞զ ծիծաղելի է կուսակցութիւններու այս անջատ գործօնէութիւնը, ուր տեղ ակամայ կ՚ստիպուինք հարցնել թէ, արդեօք զոհուած աշխատութիւնները և ջանքերը ամէն ուժ իրե՞ն համար կ՚նէր թէ ընդհ. հայութեան օգտին համար, եթէ ընդհանուրի օգտին էր եղածները՝ ապա ուրեմն, թող խոստովանին թէ անզուսպ եսասիրութեամբ կը գործէին իրար դէմ առանց նկատելու ազգն ու անոր կեանքը, իսկ եթէ ամէն ուժ իր փառքին համար կը գործէր և ոչ ժողովրդին բարօրութեան, թող դարձեալ ազնիւ գտնուին միայն այ չափը ըսելու թէ իրենք անբարեմիտ նպատակով պատճառ եղած են ժողովրդին կեանքին ու հազար ու մէկ անասելի վնասներուն։

Մենք մեզի որչափ ալ լաւ ճանաչենք բաւական չէ, մեր մասին օտարներ իսկ կը ճշմարտեն որ հայը տոկուն և երկաթէ կազմութիւն ունեցող ժողովուրդ մը ըլլալուն է որ չի վախնար բարոյազուրկ ու Թշնամի մահմետականներէն և անոր անօրէն երկրին այնքան արիւն խմցնելէն վերջը վհատի կամ ետ փախչի. ո՞վ չի գիտեր որ հայը արիւնը աչքին առած, կրակը զէնքին մէջ դրած դիւցազնաբար կռուելու ժառանգական յատկութիւնը ունի, և արդէն՝ հայ ազգի պատմ. էջերը Թղթատող ամէն օտար մարդ, դիւրին է ըմբռնել թէ ի՛նչ աստիճան հիացումով կը կարդայ, բայց եթէ ասոնք ճշմարտութիւն ըլլալը չենք ուզեր ծածկել, ուրեմն, յանուն ճշմարտութեան՝ պէտք է որ բանանք մեր Ազգ. յիշատակարանը և այն տեղէն մէկ-մէկ քաղենք մեր անյաջողութեան և ոչ-յառաջդիմութեան արգելքները, զոր ցաւ ի սիրտ պիտի գամ նկարագրել հակառակ ամէն եսասէր և ո՛չ ազգասէր, ամէն անձնասէր և ո՛չ հանրասէր կուսակցականներու ցանկութեան. (բացառութիւնները յարգելի և նուիրա՛կան են)։

Դառնալով իմ նիւթի կարգին, յանուն անկեղծ ազգասիրութեան և հայրենասիրութեան կը հրաւիրեմ մեր բոլոր յարգելի կուսա՛կցականներուն որ թողնեն պառակտիչ ու աւերիչ և կողմնակի ուղղութիւնները, ու աշխատին միութեան զօրեղ կապը կապել ամենքին, առանց խտրութեան սեռի ու վիճակի, համոզուելով թէ՝ հարուստը դրամով, աղքատը ուժով, գրողը գրչով և հայ կինն ալ իր կարողութեան չափով, այսպէս ամենքը ի միասին ի մի ձուլուելով գլուխ կը հանեն և մի օր իրականացած կը տեսնեն որ՝ իրենք այլ ևս ստրուկ չեն և ոչ ալ գերի, այլ ազատ ու անկախ ժողովուրդ, իսկ եթէ այսպէս չ՚ընենք, անխելքութիւն չէ՞ մեզի համար որ եսասիրական փուճ չարամտութեամբ և զիրար հարուածելու ու միմեանց ուժը ջլատելու նենգամտութեամբ երեսի վրայ կը Թողնենք ամենուս գոյութեան շարժառիթը եղող խնդիրը, և չենք տեսներ որ ազգը (մենք) ճգնաժամի դառնութեան մէջ իր տառապի, ուրեմն, կը վայլէ՞ մեզի որ այսպէս անսէր՝ ան[illegible] [illegible]նս իրար հետ ինչպէս կապրի շունը կատուին

Եթէ դարերէ ի վեր որդեկո[illegible]
ազատոր սրտին մխիթարութիւն ս[illegible]
ւակներուն վայելուչ եղբայրսիրո[illegible]

հետ, այն ժամանակ շատ դիւրին է ըմբռնել որ մենք այս դժուարագոյն ու աւերիչ կացութենէն պիտի ազատինք։

Կուսակցութեանց մասին յաջորդիւ կաշխատիմ գրել դիւրըմբռնելի ձեւով։

Ուրեմն, կրկին գալով մեր ըսելիքներուն շուրջը, մի քանի ծանօթ ճշմարտութիւններով կը փակենք խնդիրը, հայերիս Սահմանադրութեան Թուականէն (1859) կը յուսացուէր որ ամուր ու յուսադրիչ միութիւն մը շինուէր, բայց տարաբաղդաբար Սահմանադրական այդ աւետաբեր Թուականէն քսանեւվեց տարի վերջը (1885) «Արմէնիա»ն եկաւ՝ մտաւ հայ մտքերու մէջ և խանգարեց խաղաղ ու միացած գլուխները, նախապէս մեզի ցոյց տուեց այն քայլը որպէս թէ ինքն ալ եկած միացած է հայ ուժին վրայ աւելցնելու իր օժանդակ զօրութիւնը, այնպէս որ մինչև կարողացաւ իր Թերթին կուսակցական կերպարանք մը տալ, անկից երկու տարի յետոյ (1887) ծնաւ հռչակաւոր «Հնչակ»ը այս ալ իր ծնած օրէն իր կուսակցութիւնը ունենալով միացած ուժերը կտրատեց և այդ կտորտուքներով կարողացաւ իր ուղղութիւնը կանգնել, և ահա կրկին ուժ մըն ալ Թռաւ սլացաւ միացած հայերի շրջանէն, վերջապէս չորս տարի վերջ (1891) փայլուն խումբ մը եկաւ իր Թղթէ դրօշակը պարզեց և կրակոտ ուղղութիւնով մը վրեթէ ջարդից ջլատեց նախորդ երկու ուժերին, այն ատեն մենք և մեզնէ շատ շատերը գուցէ կը մտածէինք սիրել ընդհանրութեամբ և կապուիլ անոր հետ միաբան ուժով, բայց ցաւելով կը ցաւիմ որ նա ալ փոխանակ բոլոր կտրտած ուժերը իրար միացնելու՝ աշխատեցաւ ուրոյն կուսակցութիւն մը կազմել, և ահա այսօր հայերիս բաղդն ու ճակատագիրը մնաց դժբաղդաբար իրար ուտող կուսակցականների ձեռքը, որովհետև, ինչպէս ըսինք քիչ առաջ ամենքն ալ իրար դէմ մրցում ստեղծելով, բոլորը մէկէն ոստոստելով գնացին եղան ցոյցերու դագաթնակէտը, և այն տեղէն յաջողեցան գառներու անմեղ արեան հոսանքը Թափել տալ, որպէս զի Թշնամի գայլը իրեն պ'ա ս ը յագեցնէ, մինչև որ իրար դէմ ունեցած կուսակցական եսասիրական կիրքերը մեղմացուցին։ Հիմա, այսպէս Թէ այնպէս, կուսակցութիւն կուսակցութեանց ամենայն ինչ կուսակցական լինելով քանդեցինք տներնիս և ընտանիքնիս և նստանք ի վերայ գետնոյ և մոխրոյ։

Այժմ խցիւ Թէ, այն ամէնը որ գործ ունեցան այս խնդրոյն մէջ ազնուութեամբ խոստովանին և խոստանան իրենց տուած վնասները քննելու համար միութեան անձնազոհ համախոհներ լինիլ, համոզուելով Թէ՝ մինչև միութիւն չի լինի ազատութիւն չի լինիր, և պիտի գայ օր մը, անշուշտ, որ ժողովուրդը ինքնաբերաբար ձայն պիտի բարձրացնէ միութիւնը գրկելու համար, այն ատեն մեր կուսակցականները մեզնէ ո՞ր մէկիս երեսը պիտի կարողանան ազատ նայիլ։

Արդ, ուրեմն միութեան մէկ զաւակն ալ մենք լինելով, այժմէն կը կանխենք հրապարակաւ առաջարկել որ, ո՛վ ուրեք անձնազոհ հայրենասէր կան ժողովրդեան մէջ միութիւնը զօրացնեն, և այս ո՞ր ժամանակի մէջ պիտի ընեն եթէ ոչ հիմա, որպէս զի (քա՛ւ լիցի Թէ չարագուշակ լինիմ), եթէ յանկարծ ազգին գոյութեանը սպառնացող անակնկալ չարիք մը կրկին փորձէ հայերի գլխէն անցնիլ՝ այն ատեն միացած ուժի մը դէմ հանդիպելով չի կարծէ փորձել նոյն բաները ընել։

Վերջացնելով խօսքս, անկեղծ պարտ կ՚զգամ ըսելու որ եթէ քահանայ կամ քարոզիչ մը եղած լինէի, քարոզներուս յառաջաբանը և վերջաբանը միութիւնով պիտի սկսէր և միութիւնով պիտի վերջանար, և այս ոչ այլ ինչ մտքով, եթէ ոչ մեր արդի, մանաւանդ արտասահմանեան Երեցներուն համրացած լռութիւնը սրբելու միակ դիտումով։

Ռուսճուք

Շաւարշ Գարագաշ

Աղեքսանդրիաէն Լա-Հէյի Դեսպանաժողովին ղըրկուած յիշողագրի մը պատճէնը։

# ԱՌ ՎԵՀԱԺՈՂՈՎՆ ԼԱՀԷՅԻ

## Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆ ՀՈԼԱՆՏԻՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

# ՎՍԵՄԱՓԱՅԼ ՏԻԱՐՔ

Անգամ մը ևս կը ներկայանանք հալածեալ և չարչարուող դժբաղդ հայերս, ներկայիս գումարեալ Վեհաժողովոյդ, ներկայացնելու մեր ցաւալի վիճակը, որ ենթարկուած ենք այսօր Տաճկա-Հայաստանի մէկ ծայրէն միւսը, և կը հեծենք բռնութեան լուծին տակ։

Արդէն ծանօթ է մեր ազգի կացութիւնը ամբողջ Եւրոպայի, որ հետզհետէ ոլքան ծանրացաւ և վատթարացաւ մեր կեանքը մեր ողբացեալ Հայաստանի մէջ։ Այս մասին Թող մարդկութեան պատմութիւնը խօսի։ Ամբողջ 43 դար ողջոյն հայութիւնը իւր գոյութիւնը պահեց պահպանեց. և 30 դարեր, բազմատեսակ վտանգներու և բարբարոսութիւններու կուրծք տուած, իւր սիրելի Հայաստանը և ուրոյն անկախ կեանքը ապահովեց մինչև Քրիստոսի 1375 Թուականը, որ վերջի չորրորդ հարստութեան կործանումը բերաւ։

Այս հայոց ազգը այսօր 600 տարի է որ ակամայ հպատակեցաւ տաճիկ կառավարութեան և անոր (Ռայէն), դարձաւ. հայոց ազգը իւր ձեռքէն եկած ծառայութիւնը ըրաւ տիրապետող տաճիկ պետութեան, և ամենայն կերպով նորա օգնեց հայրենիքի բարգաւաճման, եւ նորա զօրավիգը եղաւ ամեն ձախորդ րոպէներու։

Բայց տաճիկ կառավարութիւնը ի՞նչ ըրաւ հայոց ազգի այսքան երկար դարեր հաւատարմութեան հնազանդութեան և անհամար ծառայութիւններու փոխարէն, ահա ըրածները. քաղաքային պաշտօններու գոչեց և մեծ մեծ վարձատրեց կարգ մը հայոց, Թէ՛ մայրաքաղաքի և Թէ՛ քանի մը գաւառներու մէջ, շոյեց շողոքորթեց հայ պաշտօնեաները որ հայերը խաբէ, միւս կողմէ Թօզ կը փչէր երեք միլիոնէ աւելի հայոց աչքերուն, և ամեն կողմէ կաշխատէր գաղտնապէս որ հայերը աղքատացնէ. միւս կողմէ հարստահարութիւններու, զեղծումներու և առևանգութիւններու ազատ ասպարէզ բացուած էր տեղական քիւրտ աշիրէթներու, տաճիկներու, չէրքէզներու և լազերու. արդէն սոյն պաշըպօզուքները, Բ. Դրան և վալիներու և միւթէսարըֆներու դրդմամբ և արտօնութեամբ կը Թալլէին կաւերէին բառին իսկական նշանակութեամբ. անզէն հայ ազգին, երկրի ամբողջ մարդասպանները և չարագործները, երբեմն Թեպէտ դատարան կը բերուէին, բայց միւս կողմանէ անպարտ կարձակուէին. բողոքները անլսելի կը մնային, և շատ անգամ բողոքողները իբրև զրպարտիչ կը բանտարկուէին. երբէք իրենց վկայութեան մտիկ ընող և ընդունող չկար, որովհետև քրիստոնեայ էին անհաւատ կը համարուէին, ահա՛ այս վիճակ դարուց ի դարս տեւեց մինչև 1878 Պերլինի Վեհաժողովը, որ դաշնագրութիւնը ստորագրուեցաւ վեց մեծ Պետութիւններէ, և Հայաստանի հիմնական բարեկարգութեան 61րդ յօդուածը դաշնագրի մէջ գրուեցաւ յատկապէս հայոց համար։

Եւ ահաւասիկ այն օրէն մինչև այժմս անցած քսան տարիներէ աւելի է, ո՛չ մի բարեկարգութիւն և ո՛չ մի բարերար գործ չի կատարուեցաւ, և մեր բոլոր աղերսագիրները և աղաչանքները ի զուր կանցնէին. մեր այս դիմումներուն փոխարէն, մեր դպրոցները սեղմումներու և կասկածներու կենԹարկուէին, մեր Եկեղեցիներէն Սրբոց անունները կարտաքսուէին, մեր աղքատիկ Թատրոնները

կը գոցուէին, մեր ուսուցիչները և գրականութեան հեղինակները կը բանտարկէին և կը կորսնցուցնէին, Սուրբ Եկեղեցւոյ բեմէն կարգիլուէր քարոզիչներու որ քարոզ խօսին և ժողովուրդը մխիթարեն, մեր բարեգործական, դպրոցական և աղքատախնամ ընկերութիւններու վարիչները դատաստանի կենթարկուէին, և կը հալածուէին. այս պարագային մենք հայերս որո՞ւ դիմէինք, երբ կը տեսնէինք տաճիկ պետութիւնը որ մեր Հայաստանի վիճակին բարեկարգութիւն իւր ամէն ճիւղերովը չի գործադրելէ ի զատ, խուլ հալածանք մը սկսած էր. անլուր խժդժութիւններ ի գործ կը դրուէր հայ չինականի հայ քաղաքացիին վրայ, և մեր սիրելի և պատուական քոյրերը և կոյսերը կառեւանգուէին, վերապահելով ապագային աւելի մեծ չարիքներ։

Վսեմափայլ Տի՛րը, պահ մը հանգիստ առիք ուշադիր և ականատես եղաք վերջի տասն տարւոյ մէջ մեր Հայաստանի և բոլոր Տաճկա-Հայաստանի հայոց կրած աղետին։

Վերջապէս ի՞նչ ըրաւ տաճիկ կառավարութիւնը, որ երբ տեսաւ թէ այլ ևս իրմէն յոյներնիս կտրած ենք, և կը դիմենք վեց մեծ Եւրոպական Քրիստոնեայ Պետութեանց, որ խոստացուած Հայաստանի բարեկարգութիւնը ի գործ դրուին, խնդաց և այս խնդումը հայոց բազմաչարչար ազգին աղետի գոյժն էր, և չուշացաւ, ինչ որ մտադրած էր նա ի գործ դրաւ ծայրահեղ և խժդժական ամէն հնարքներով, առանց ակնածելու վեց մեծ Պետութիւններէն. նա հայոց ունեցած քանի մը հատ անձնապաշտպանութեան զէնքերը ամբողջովին հաւաքելէ վերջ, կոտորեց ծծկեր մանուկէն մինչև զառամեալ պառաւը մօտ 300,000 հոգի, և այրիացուց մօտ 20,000 կին, և որբացուց 50,000 անմեղ մանուկներ, հայ քրիստոնեայի Եկեղեցին աւերեց մղկիթ դարձուց և (էզան) կարդաց, և մօտ 20,000 հոգի մահմետականացուց և թլփատեց, և հայհոյեց Քրիստոսի Խաչին. և ընդհանուր քրիստոնեաներուն, ըսելով թէ թող դայ անհաւատ Եւրոպացին ձեզ ազատէ. նա չի բաւականացաւ այսքանով, ամբողջ գիւղեր աւերեց, կողոպտեց և կրակի տուաւ, ու հազարաւոր տարուայ յիշատակարաններնիս և հնութիւններնիս, քանդեց փչրեց և մոխիր դարձուց, շաբաթներով դեռերը այրուած ցորեն կը տանէին։

Ո՜հ Տիրոջ, մենք հայերս բողոքեցինք և երբէք չի պիտի դադարինք բողոքելէ, որ տաճիկը մեզ այսպիսի սոսկալի հարուած տալէ վերջ, տակաւին կը մտադրէ բնաջինջ ընել հայութիւնը. մենք կը բողոքենք Եւրոպայի յանուն տանջուող մեր արենակից եղբայրներնուս համար։

Այսօր գումարուած Վեհաժողովիդ կը դիմենք, գիտնալով որ նա փոքր ազգաց ճակատագիրն իւր ձեռքն ունի, ինչպէս մեզ նման տանջուող շատ ազգեր փրկած ազատած և նոցա ուրոյն կեանքը ապահովուած է։

Ողջոյն հայ ազգը սգաւոր դարձաւ, և այս ժամուս ամէն ապարանի տուն և խրճիթ և եկեղեցի սգոյ սև գոլը ծածկուած, հայ քրիստոնեայն կողբայ անցեալ անդառնալի կորուստները, և ներկայ ժամուս կրօնքը և ազգութիւնը վտանգի և կործանման մատնուած կը տեսնէ։

Հայ քրիստոնեայ Եկեղեցին 1900 տարիէ չէ դադարած աղօթելէ, քրիստոնեայ կայսրերուն, թագաւորներուն, արքայորդիներուն, իշխաններուն, զաւակներուն և զօրականներուն. բայց ցաւօք սրտի կը տեսնենք որ չի գտնուեցաւ Եւրոպայի մեծ Պետութիւններէն մէկը որ կարեկցէր մեր վրայ, և ձեռք կարկառէր մեզ հայերուս արդեամբ և գործով իբրև քրիստոնեայ եղբայր և յորդորէր ուրիշներն ալ որ մեզ օգնութեան հասնէին։

Մեր այս վիճակը դաւն է և շատ աղեկտուր. եթէ ներկայ ողբալի վիճակը շարունակուի, հայութեան գոյութիւնը շատ վտանգալի պիտի լինի։

Մենք հայերս կը ցանկանք միայն մեր Հայրենիքին մէջ ազատ մարդ ապրիլ խաղաղութեամբ և ինքնուրոյն կեանք մը ստանալով՝ չնորհիւ քրիստոնեայ Եւրոպայի հսկողութեան տակ. բռնութեան լուծէն ազատել, և աշխատիլ երկրի բարգաւաճման և մարդկային օգտին ծառայութեան. լինի արդար դատաստան և մարդկային իրաւունքը յարգուի, այսպէսով ժամանակ պիտի ունենանք մեր ահագին կորուստները դարմանելու, և քաղաքակրթութիւն յառաջացնելու, և տարածելու աշխատիլ, որ խաւարին լոյս յաջորդէ, որ մարդիկ կարողանան անարգելք հանգիստ յառաջ դիմել։

(Շարունակելի)

# ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

«Անահիտ»ին մէջ տես այ զինք։ Խոշոր գրագէտ մ'է. բայց փոքր, շատ պզտիկ, չամանդաղէն աւելի մանր հայրենասէր մը։ Զինք հայրենասէր չինելու համար չէ որ կը գրեմ։ Ան՝ թէև Անահիտի մէջ կը պտտի, բայց Բարիզ կը բնակի. և կարելի՞ է միթէ հոն բնակիլ ու մօտայի չի հեռանալ։ Միթէ ֆրանսուհի՞ մը ալ չարժեր Արշակ, որը իր քօրսէթն անգամ մօտայի հետ կը փոխէ։ Ազգաթիրական մօտան անցած էր։

Զինք վերջին անգամ «ներկայ»ին մէջ ընկղմած տեսայ, մինչև ականջները թաղուած էր. հարկ եղաւ անցեալն վրայէն քալել և «պատասխանատուութիւններ»ու գլուխը կայնիլ զինք լաւ դիտելու համար։

«Գլուխը երկու ձեռքերուն մէջ» առած «ներկայ» ճահիճին մէջ նստեր կը մտմտար .... քսակը որ «մեծ մարդ»ու մեռնելէն ասդին անօթեցած էր։ Գլուխը քեչ մը վեր բարձրացուց աչքերու մէջ երկու կաթիլ .... թանաք կար «պատասխանատուութիւններ»ու օրով հոն ցատկած։ Եթէ սև չըլլար արցունք պիտի կարծէի։ Ակառներով «Մուրթիւն»ը ծամեց, կիծ մը ալ «Տիգրիս»ին տուաւ, ապա «Շարժումը» բզկտեց։ Մէյ մ'ալ «անտանելի Վարդ» պօռալով տեղէն ցատկեց ու սուտի տոպրակը վար առաւ հատ մը ջանաց «Դրօշակ»ի մէջ զետեղել հատ մըն ալ Կարիպալտիին ընծայ տալ։ Մեկնութիւններ ալ ըրաւ, Զիպրանիի միտքը կարդաց։ Իր բառերը գործածելով, «յամառ» մնաց «պատասխանատուութիւններ»ու վրան կամ տակ. թէև պ. Ջերազ պաշտօնական գրութիւններ մէջ բերելով այդ «յամառ»ութիւնը փչրել ուզեց։ Ցեղը չինելու համար կացին մը մը կար քովը, որ երբեմն ձեռք կառնէր ու ազգին մաս մը քանդելու կը գործածէր։

«Ներկայ»էն մէկ քայլ հեռու Փարթիզ մը կար նետուած որը «պատերազմի դէմ պատերազմը» և ընկ. տունէն գնած էր. Ռուսիոյ Զարին մօտեցաւ և գովեստի ճառով մը «Փատիշահըմ չօք եաշա» յանկերգով Փարթիզն անոր նուիրեց։ «Ներկան» ատ գովեստներու տեղ դժգոհութիւն կը պարունակէ։ Ցիշողութիւնը տկարացած սեպեցի։ «Վահան» կանչեց ուժգին «Նոր-Կեանք մէջ մի պահուիր, սա... Ս.. Ա... սա անտանելի Վարդօին խօսք մը հասկցուր»։ Վարդ անուն արտասանած միջոցին կը դողար, յայտնի էր թէ կը զարհուրէր։ Ատ ահ ու դողին մէջ Հայաստանը բաժնելու ելաւ. ես ալ մեկնեցայ։ Բայց «Մուրթիւն»ի էջերէն մեկնելէս առաջ պ. Զօպանեանի դէշ լուր մը ունիմ հաղորդելիք։ «Անտանելի Վարդ»ին քով անյաղթելի Դասպար մը մը կեցած տեսայ։ Ցտեսութիւն։

Պօսթոն Արմէն

## ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԷՆ

Ուրախալի է որ Հայաստանէն և Կիլիկիայէն եկած Թշուառութեան սրտաճմլիկ լուրերը ամեն հայու սրտի մէջ արձագանք գտան, և արդարև այսքան սրբազան պարտականութեան մը հանդէպ անտարբերութիւն դատապարտելի պիտի ըլլար։ Այո՛, գտնուեցան նաև քարսիրտ հայեր, մանաւանդ ունևոր դասակարգին մէջ, որոնք նախընտրեցին թատրոններու, նուագահանդէսներու մէջ առաջին աթոռը գրաւել, գինետուններու մէջ իրենց անառակութեամբ նշանաւոր հանդիսանալ, բայց ի նպաստ սովատանջ հայոց աչխարհի, իրենց երբեմն ի բարերար՝ բայց հիմա թշուառ մօր, գուժարուած ժողովի մը մէջ իրենց բացակայութեամբ կը փայլէին։ Եղան այնպիսիներ ալ որոնք դեղին ոսկիներու կոյտին վրայ նայիլ ու զուարճանալով ինքզինքնին աւելի երջանիկ սեպեցին քան արենակից որբի մը կամ որբևարիի մը դառն արցունքները սրբել։ Եղան նաև այնպիսիներ որոնք խելճ հայ ազգին անունը անխղճաբար չահագործեցին օտարներու առջև, իրենց անձնական նեղ և գծուծ հաչիւները առաջ մղեցին ազգային ամեն կենսական չահ ոտնակոխ ընելով, ազնիւներու ազգօգուտ ձեռնարկներուն առջև թումբեր կանգնելով։ Մենք կը խղճանք այդպիսիներու վրայ...։ Ապագայ ազատ Հայաստանի պատմութեան էջեր թուք ու մուր ունին այդ օրինակ ազրակոյտի ասպետներու երեսին։ Ապագան պակներ ունի ազնիւներուն համար.... սիրելի հայ եղբայր դու անվհատ գործէ։

Տեղւոյս ափ մը աղքատիկ ուսանողները անշուշտ՝ անտարբեր չէին կրնար մնալ սիրած հայրենիքի մէջ տիրած թշուառութեան հանդէպ։ Երբ քաջարի Զէյթունի ի նպաստ հանգանակութեան լուրը առինք, փութացինք մենք ալ մեր պզտիկ բաժինը ունենալ, և ամեն ճիգ թափելով կարողացանք «Տիգրիս»ի խմբագրութեան 138 ֆր. ղրկել, որմէ, չեմ գիտեր ինչո՞ւ, ընկալագիր մը անգամ չստացանք։

Այս անգամ Վանի համար էր որ հանգանակութեան ձեռնարկեցինք և մեր մէջ հաւաքեցինք 43,75 ֆր.։ Մեր սիրելի ուսուցիչը պ. Յ. Թ. Գայայեան տեղւոյս Եկեղեցւոյն մէջ Հայաստանի և հայոց վրայ բանախօսութիւն մը ըրաւ։ Հայասէր քարոզիչ Տէր Կէօրկիւ ժողովուրդը յորդորեց, որ միշտ մտքէ չի հանէ Հայաստանի թշուառ կրօնակից եղբայրները և առատ նուէներով սովատանջ Հայաստանի օգնութեան հասնի։ Նոյն օրը գոյացաւ 156.25 ֆր. նպաստ, և մերն ալ վրայ դնելով 200 ֆր. ղրկեցինք Պատրիարքարան։ Ցոյս ունինք տակաւին ղրկել։

Օտարները կը կարեկցին մեզ, ո՞րչափ գթոտ և քնքոյշ սիրտ մը պարտի կրել ամեն հայ իր եղբայրներու նկատմամբ։ Հայե՛ր նուիրական պարտականութեան մը հանդէպ կը գտնուինք, պարտաճանաչը քաջ է և ազնիւ, ուրե՛մն յառա՛ջ հայեր, օգնութի՛ւն, օգնութի՛ւն անօթի ենք կը գոչէ մեր յաւէտ սիրեցեալ ազգը, վիրաւոր առիւծը։

Վիլհէլմստորֆ — Ամասիա — Մարզպետունի

# ԼՐՏԵՍ — ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ ՍԵՍԱՐԱՆՈՎ

Դիտեց և Գրեց

ՃՇՄԱՐՏԱԽՕՍԵԱՆ

Ը

Թափառիկ — Չեմ յուսար որ այս գործին մէջ Եու...ն մատ ունենայ։ Եու... իբրև անհատ մը ի՞նչպէս կարող է Դաշնակցութիւնը իրեն ձեռքը պէնք դարձնել և ձեզ դէմ գործածել։ Յեղափոխութիւնը չէ կարելի անհատական կամքի և նպատակներու ծառայեցնել...։

Արփիար — Այդ ձեր մտածումը ազնիւ և անձնուէր յեղափոխականներու համար է։

Թափառիկ — Չեմ պնդեր, բայց համոզուիլս ալ դժուար է, ինձ անհաւատալի կը թուի կոր։

Արփիար — Այո՛, հաւատացէք, ես ուրիշ թշնամի չունիմ, Եու... և Մելքոն սարքած են այս ոճիրը։ Բայց ես նորէն ազնիւ գտնուելով չի յայտնեցի ոստիկանութեան անոր անունը, թշնամիներուս անունը հարցուցին, ես թշնամի չունիմ, պատասխանեցի։ Ես անոր խերը իմ ձեռքովս կանիծեմ, թո՛ղ գիտնայ թէ ես ի՞նչ մարդ եմ, եթէ իրեն պէս ստոր արարած մը լինէի, իսկոյն անունը ոստիկանութեան կը յայտնէի։

Տիգրան — (Թափառիկին) Այո՛, եղբայրս այդ մասին շատ ազնիւ, վեհանձն և ներողամիտ գտնուեցաւ։

Թափառիկ — Այդպէս ալ լինելու էր, յեղափոխականին անազնիւ և ստոր գործ չի վայլեր, այն որ ստոր և անազնիւ է, արդէն ճշմարիտ յեղափոխական չի կրնար ըլլալ...։

Տիգրան — Անշուշտ յեղափոխականներու մէջ անազնիւներ ալ կը գտնուի՞ն։

Թափառիկ — Ես չեմ ըսեր թէ չեն գտնուիր, անշուշտ կարելի է որ յեղափոխութեան ցեցեր ալ մուտք գտած լինին, բայց ատոնք ճշմարիտ յեղափոխականներ, անձնազոհ յեղափոխականներ չեն, մի օր անկասկած անոնց դիմակը վար կառնուի և յեղափոխութիւնը կը մաքրուի այդպիսի ցեցերէ։ Ի՛նչ որ է, ես շատ ուրախ եմ որ Արփիար էֆէնտիի վէրքերը անվտանգ են։ Թոյլ կտաք որ մեկնիմ, հիւանդին շատ նեղութիւն պատճառել ներելի չէ։

Արփիար — Շնորհակալ եմ, այնքան վատ չեմ զգար վիճակս, գիշերը շատ անհանգիստ անցուցի, բայց հիմա լաւ եմ։

Թափառիկ — Ուրախ եմ, մնաք բարով (Արփիարի և Տիգրանի ձեռքերը սեղմելով կը մեկնի)։

Արփիար — (Տիգրանին) ժամը քանի՞ն է։

Տիգրան — (գրպանի ժամացոյցը նայելով) Տասնեմէկն է։

Արփիար — Ո՜հ, գիշերուան դեռ մէկ քանի ժամ կը մնայ։

Տիգրան — Այո՛, եթէ կուզես քնացիր, երէկ գիշեր չի քնացար։

Արփիար — Կարծես թէ քուն ունիմ. շատ լա՛ւ, վրաս ծածկէ թերեւս քիչ մը քունս տանի, այսօր ցաւերս մեղմացած են։

(Տիգրան վերմակը Արփիարի վրայ լաւ մը ծածկելով սենեակէն դուրս կելլէ։ Արփիար կ'սկսի քնանալ։ Քիչ յետոյ Տիգրան ներս մտնելով եղբօրը ձայն կուտայ)։

Տիգրան — Եղբա՛յր, եղբա՛յր...։

Արփիար — (աչերը բանալով), Ի՞նչ է Տիգրան։

Տիգրան — Կաթդ բերե՞մ։

Արփիար — Ի՞նչ, առաւո՞տ է։

Տիգրան — Այո՛, այս գիշեր շատ հանգիստ քնացար։

Արփիար — Այսօր աւելի հանգիստ եմ, քունը բաւական օգտակար եղաւ։

(Տիգրան կը մեկնի և մի գաւաթ կաթով կը վերադառնայ։ Արփիար կաթը կը խմէ։ Տիգրան պարապ բաժակը առած կը մեկնի, և քիչ յետոյ կը վերադառնայ)։

Տիգրան — Եղբա՛յր փաշային կողմէ քօմիսէրը եկած է։

Արփիար — Թո՛ղ վեր հրամցնէիր։

Տիգրան — Վարը տիկնոջ մօտ է, սուրճը խմէ վեր պիտի գայ (կը մեկնի)։

(Քիչ յետոյ Տիգրան և քօմիսէր ներս կը մտնեն)։

Քօմիսէր — Բարև Արփիար էֆէնտի, փաշան շատ ուրախ է որ վէրքերդ անվնաս են, շատ շատ բարևներ ունի. ամեն կողմ խիստ հրամաններ տուաւ որպէսզի Եու....ը գտնեն, եթէ արդէն փախած չէ, անկասկած մեր ձեռքը կը լինի։

Արփիար — Փաշային շատ շնորհակալ եմ, չի գիտեմ իմ երախտագիտութիւնս ի՞նչպէս յայտնեմ։

Քօմիսէր — Փաշան ձեր Պոլսէն մեկնելը յարմար դա-

# ԳԱՌՆԻԿ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ

## ԳՐԱՎԱՃԱՌ, ԹՂԹԱՎԱՃԱՌ ԵՒ ՏՊԱԳՐԻՉ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1890 Ի ՐՈՒՍՉՈՒՔ

ՀԱՍՑԷ՝ *K. Deukmédjian, Roustchouk. (Bulgarie)*

---

Մանաւոր պահեստ Ռուսահայ հրատարակութիւններու։

Կը վաճառէ դպրոցական գաղափարքեր ու գրասենեկի պիտոյքներ։

Կը հայթայթէ նաև ամէն տեսակ և ամէն լեզուէ գրքեր, աշխարհագրական քարտէզներ և ն. ուր որ հրատարակուած ըլլայ։

Կը ստանայ գրքեր, տետրակներ, ընկերութեանց կանոնագրեր, շրջաբերականներ, ընկալագրեր, հարսանեկան տոմսեր, նամակագլուխ, պահարան, այցաքարտ, մահագրեր և ն.՝ հայերէն, ֆրանսերէն, պուլկարերէն, գերմաներէն, ռումաներէն, ռուսերէն և անգլիերէն լեզուներով. կ'ստանձնէ նաև այս լեզուներով պատրաստութիւնն կնիքներու՝ քաուչուքէ և պղինձէ։

Կը բաժանորդագրէ «Արաքս», «Հանդէս Արևելեայ», «Այգաբերան Հանդէս», «Լուսայ», «Անահիտ», «Միութիւն», "L'Exposition de Paris 1900", "Lectures pour tous" հանդէսներու և ուրիշ հրատարակութիւններու։

Կը վաճառէ Պուլկարական կառավարութենէն երաշխաւորեալ Սոֆիա քաղաքին վիճակահանութեան տոմսերը։

Կը վաճառէ նաև հին և նոր նշանաւոր Աղգայիններու իսկական մեծապիր (21×27) և լուսատիպ պատկերները, ընտիր (30×36) քարտոնով։

Կը գնէ և կը վաճառէ ամէն երկրի գործածուած նամակադրոշմներ։

## ՈԳՅՍԱՆՆԵՐ

### ՎԱՃԱՌՄՈՒՆՔ ԿԱՆԽԻԿ

Ցանձնարարութիւնք կը կատարուին մեծ և փոքր քանակութեամբ։

Աղգային հաստատութիւններու և մեծաքանակ գնողներու համար մանաւոր պայմաններ։

Պահանջելի տեսակներու նախ անաշիւն ու նամակի պատասխան ստանալու համար պէտք է կանխաւ յղել Պուլկարիայէն 30, իսկ օտար երկիրներէ 50 սնդ. ի չը գործածուած նամակադրոշմ. ինչպէս և փոքրաքանակ յանձնարարութեանց արժէքի փոխարէն։

Այն երկիրներէն, որ Պուլկարիոյ համար մանտատ—բօնտ չեն տար, դրամ յղել կարելի է հետևեալ հասցէներէ մէջն։

*Congrégation des Méchitharistes*

VII/2 *Mechitharistengasse* 4.

*(Autriche)* *Vienne*

A. Tchobanian

6. Place de l'Odéon

(France) Paris

---

Hachette & C-ie

79. Boulevard St. Germain

(France) Paris

---

Artin Boghossian

Poste Restante

(Egypte) Aléxandrie

ԾԱՆՕԹ. Դիմողները պէտք է իրենց հասցէները մանրամասն եւ որոշ կերպով յայտնեն։

տեց, և ահաւասիկ ձեր անցագիրն ալ տուաւ (թուղթ մը հանելով Արփիարին կտայ), եթէ դրամի պէտք ունի, տամ ըսաւ։

Արփիար — (թուղթը առնելով) Շատ շնորհակալ եմ, դրամի պէտք չունիմ, արդէն մօտս բաւական դրամ կայ։

Քօմիսէր — Փաշան խնդրեց որ ուղղակի Լոնտոն երթաք և ձեր ծանօթ ճարպիկութեամբ Հնչակեան կուսակցութիւնը լուծէք, և եթէ Դաշնակցականներուն մէջ մրտնելով յաջողիք անոնց գլխուն ալ մի խաղ խաղալ վերջին ծայր գոհ պիտի մնայ, և արդէն այսօր գնաց Վեհափառ Սուլթանին տեսնելու և ձեր մասին խօսելու, անպատճառ Նորին Վեհափառութեան շնորհներուն պիտի արժանանաք։

Արփիար — Թէ՛ Վեհափառ Սուլթանին և թէ՛ փաշա էֆէնտիին երախտագիտութիւնս յայտնելու բառ չեմ գտներ. Նորին Վսեմութեան հրամանները գլխուս վրայ, Հնչակեան կուսակցութեան մասին ըսածը արդէն պիտի կատարեմ, Նաղարբէգը պիտի տապալեմ և նոր կուսակցութիւն մը պիտի ստեղծեմ, անշուշտ կիմանաք, որ այդ կուսակցութիւնը իմ ղեկավարութեանս տակ միշտ Օսմանեան տէրութեան օգտակար պիտի լինի։ Թերթ մ'ալ պիտի հիմնեմ և անով հակայեղափոխական և պահպանողական գաղափարներ տարածեմ, երբեմն Օսմանեան կառավարութեան դէմ պիտի գրեմ, թէև շատ թոյլ, որպէսզի կասկածի տեղի չի տամ։

Քօմիսէր — Շա՛տ լաւ մտածեր էք, փաշան ձեր վրայ շատ մեծ յոյս ունի, միշտ պիտի թղթակցի ձեզ հետ և եթէ ինքը պաշտօնէն հրաժարի, որովհետև դեսպանները պահանջած են, Թահսին պէյը պիտի կատարէ թղթակցութիւնը։

Արփիար — Որպէսզի Լոնտոնի մէջ իմ վրայ չի կասկածին, իմ մեկնելէս յետոյ թո՛ղ Տիգրան եղբայրս մի քանի օր բանտարկէ իմ պատճառաւս, որ պէս թէ ես փախած լինիմ և զիս եղբօրմէս պահանջեն։

Քօմիսէր — Այդ շատ լաւ խորհուրդ է, հայտէ՛ Տիգրան էֆէնտի, մի քանի օր ծակը.՝.՝.՝ (կը ժպտի)։

Տիգրան — (ժպտելով) Անշո՛ւշտ փաշային շնորհիւ տունէս հանգիստ կապրիմ։

Քօմիսէր — Ատոր կասկած չկայ։

Արփիար — Եղբօրս բանտարկուելովը յեղափոխականներուն կարող եմ մեծ վստահութիւն ներշնչել, և անով միայն կրնամ յաջողիլ միամիտները համոզել և Հնչակեան կուսակցութեան մէջ բաժանում և պառակտում ձգել։ Մի քիչ Դաշնակցականներէն կը կասկածիմ, ի՛նչ որ ալ ընեմ, անոնց վստահութիւնը չեմ կարող գրաւել։ Միայն մի բան կայ ընելիք. այն է կազմել իմ թեւիս տակ նոր Հնչակեան կուսակցութիւն մը և այդ նոր կուսակցութիւնը կերպով մը միացնել Դաշնակցութեան հետ, ա՜խ, եթէ մի անգամ ոտքս Դաշնակցութեան մէջ դնեմ, Աստուծմով քար քարի վրայ չեմ թողուր, մանաւանդ որ վրէժս ալ լուծած կը լինիմ...։

Քօմիսէր — Աստուած յաջողութիւն տայ։

Արփիար — Վէրքերս գոցուելու վրայ են, մի քանի օրէն կը մեկնիմ, և եղբայրս ալ հասարակութեան կը տարածէ թէ գաղտնի փախած եմ։ Լոնտոն հասնելուս պէս փաշային կը գրեմ և հետզհետէ տեղեկութիւններ կը հաղորդեմ։

Քօմիսէր — Ուրեմն մնաք բարով, մինչև ձեր մեկնումը ես նորէն կուգամ տեսութեան և թերևս փաշան ալ հաղորդելիք նոր բաներ ունենայ. ձեր ըսածները կը հաղորդեմ փաշային։

(Քօմիսէրը կը մեկնի)։

Արփիար — Տիգրա՛ն, իմ մեկնելէս յետոյ տեսած բարեկամիդ ու ծանօթիդ կ'սես որ «եղբայրս փախաւ» և կը պատուիրես որ մարդու չըսեն, այսպէս աշխարհ կիմանայ։

Տիգրան — Շա՛տ լաւ։

(Վարագոյրը կիջնէ)

## ՈՒԹԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

(Տեսարանը կը ներկայացնէ Լոնտոնի մէջ մի մեծ տան չքեղ զարդարուած սենեակը, սեղանի մը մօտ Արփիար մինակ նստած է թիկնաթոռի մը մէջ թաղուած։

Արփիար — (նստած ինքնիրեն կը խօսի) Հայկական յեղափոխութեան շնորհիւ այսօր Լոնտոնն ալ տեսայ, Լոնտոնի մէջ փառաւոր կեանք պիտի վարեմ, գեղեցիկ անգլուհիներ դրամիս շնորհիւ (ձեռքը գրպանին կը զարնէ և դրամները կը շլրտան) իմ առջև պիտի քծնին...։ Ապուշնե՛ր..., Հայաստան կերազեն, յեղափոխութեան վրայ յոյս կը դնեն.՝.՝.՝, ցոյցեր կը կազմակերպեն և Նաղարբէգներ այստեղ փառաւոր կեանք կը վարեն։ Ես ինչո՞վ վար կը մնամ. Նաղարբէգէ, այդ փառամոլ հրեշէն, ես ինչո՞ւ չի վայելեմ կարմրուկ ոսկիները և սև աչուի անգլուհինե՛ր...։ Այո՛, վերջապէս նպատակիս հասայ. տապալեցի Նաղարբէգը և իր կուսակիցները, հիմա վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան պետ եմ, ամեն կողմէ նուէրներ կը հասնին, այդ նուիրատու ապուշներուն շնորհիւ արբանեակներուս հետ քէյֆ կընենք։ (Ոտքի կելլէ) բա՛յց դժուարը կը մնայ, (ձեռքը սեղանին զարնելով) այո՛, պէտք է Դաշնակցութեան մէջ սպրդիլ, պէտք է ճղմել այդ մեծախօսներուն գլուխը՛...։ (Ցուցամատը ճակտին տանելով կը խորհի) Լա՛ւ միտքս եկաւ, այդ Ճանկիւլեան պարզամիտը ձեռք առնելու է, անոր նշանաւոր անունը շահագործելու է և մանաւանդ Դաշնակցութեան վստահութիւնը գրաւած լինելուն, միութեան խնդրին միջնորդ կարգելու է։

(Զանգակը կը զարնէ և սպասաւոր մը ներս կը մտնէ)։

Արփիար — Դնա՛ Ճանկիւլեանին ըսէ, որ եթէ միջոց ունի իմ մօտ գայ, իրեն հետ կարևոր գործ ունիմ։

Սպասաւոր — Իսկոյն կերթամ. բայց այն պարոնը միւս սենեակը կ'սպասէ կոր, ի՞նչ հրաման ունիք։

Արփիար — Թո՛ղ ներս գայ, դուն շուտով գնա՛։

(Սպասաւորը կը մեկնի, և մի հայ երիտասարդ 20–21 տարեկան ներս կը մտնէ։

Արփիար — Հրամեցէ՛ք, նստեցէ՛ք։

Նորեկը — (նստելով) Լսեցի որ թերթ պիտի հրատարակէք և անշուշտ գրաշարի մը պէտք պիտի ունենաք։

Արփիար — Այո՛, այո՛, վարժ գրաշարի մը պէտք ունիմ։

Նորեկը — Ես Պոլիս գրաշար էի, եթէ պէտք ունիք ես պատրաստ եմ այդ պաշտօնը ստանձնելու։

Արփիար — Շա՛տ լաւ, շա՛տ լաւ, անունդ ի՞նչ է։

Նորեկը — Հրանդ։

Արփիար — Ա՜հ, շատ գեղ անուն ունիս...։

Նորեկը — (կարմրելով և զարմանալով) Ինչո՞ւ համար...։

Արփիար — Ես Հրանդ անունէն չեմ ախորժիր, կատե՛մ, բայց ո՛չ քեզ, այլ այն անպիտա՛ն Հրանդը, որ Մելքոն է բուն անունը։

Նորեկը — Սակայն ի՞նչ կապ ունի իմ անունի հետ անոր անունը։

Արփիար — Ի՛նչ որ է, այդ անունը ջիղերուս դպած է, կարելի չէ՞ փոխել, բայց սա ըսէ ինծի, Հրանդը դպրոցական անունդ է թէ աւազանիդ։

Նորեկը — Դպրոցական անունը է։

Արփիար — (մեծ ղունչ մը քաշելով) Հա՛, այդպէ՞ս ըսէ, ուրեմն աւազանի անունդ ի՞նչ է։

Նորեկը — Յովսէփ։

Արփիար — (Ձեռքը սեղանին զարնելով և սիրտ նեղանալով) ի՞նչ այլանդակ անուններ ունիս, Յովսէփ Եու... միենոյն բանը կը նշանակեն, այդ Յովսէփ-Եու... անունը Հրանդէն աւելի կատեմ։ Մականուն չունի՞ս....։

Նորեկը — Այո՛, ունիմ, անսկզբունքեա՛ն....։

Արփիար — Հա՛, այդ գործիս եկաւ, ամենէն շատ ախորժած անունս է այդ, այդ մասին ժամանակաւ Թերթերու մէջ գրած եմ, մի ռուսահայ Պրոֆէսորի դէմ սկը զբունք չունենալը պաշտպանելով. անսկզբունք.˝.˝. շատ լաւ բան է։

Նորեկը — Դուք գիտէ՛ք, ես այնչափ ուսում չեմ առած, որ այդպիսի նուրբ խնդիրներու խելք հասկցնեմ։

Արփիար — Լա՛ւ, լա՛ւ. եթէ պաշտօնդ լաւ կատարես, գոհացուցիչ ռոճիկ կը նշանակեմ, այստեղ կը մնաս, մեզ հետ կուտես ու կապրիս։

Նորեկը — Շնորհակալ եմ։

Արփիար — Բայց գիտնալու ես, որ կուսակցութեան մէջ ամենէն մեծը ես եմ, իմ խօսքէս ու հրահանգներէս դուրս չի պիտի ելլա՛ս, ուրիշներու խօսքը չի պիտի կատարես, հակառակ պարագային հացէդ կըլլաս, քեզ կը՝ վռնտեմ։

Նորեկը — Ինչպէս որ ուզէք, այնպէս կընեմ։

Արփիար — Ինձ նկատմամբ գաղտնապահ լինելու ես, բայց ուրիշներու համար ո՛չ. ինձ վերաբերեալ ի՛նչ որ լսես ու տեսնես, պէտք է ինձ յայտնես, իսկ իմ գործերուս վրայ ուրիշներուն բան չի պիտի ըսես։

Նորեկը — Ինչպէս որ կը հրամայէք, այնպէս կը վարուիմ։

(Այս միջոցին ծառան և Յ. Ճանկիւլեան ներս կը մտնեն)։

Արփիար — (Նորեկին) Դուն այս օրէն սկսած մեր մօտ պիտի ապրիս, գնա ծառային սենեակը և միասին ապրէ։

(Ծառային հետ Նորեկը դուրս կելլէ)։

Արփիար — Բարև պ. Ճանկիւլեան, ի՞նչպէս է՛ք, լաւ է՞ք։

Ճանկիւլեան — Քիչ մը տկար եմ, շոգենաւի վրայ անձրևի բռնուեցայ, խոնաւութիւնը տկարութիւնս սաստկացուց։

Արփիար — Շատ կը ցաւիմ, մի քա՛նի օր դեղ առէք։

(Շարունակելի)

# ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

— Լա-Հէյի Դեսպանաժողովը առժամանակեայ դադարում մը ընելով՝ 20 օրէն պիտի վերսկսի իր գործերուն։

— Անցեալ ուրբաթ Համիտը՝ սէլամլըքի արարողութենէն յետոյ բաց կառքով պալատ վերադարձած պահուն պարզ գինուոր մը հրացանն ի ձեռին կառքին կը մօտենայ փափչահըմ չօք եաշա ըսելով աղերսագիր մը նետէ կառքին մէջ։ Սուլթանը սարսափահար կը լի՛ի, իսկ զինուորը զինաթափ ընելէն յետոյ բանտը կը նետուի։

— Հ. Յ. Դաշնակցութիւնը և Մակեդոնական գլխաւոր Կոմիտէն Լա-Հէյի ժողովին պաշտօնաթուղթ մը՝ ղրկելով, Մակեդոնիոյ եւ Հայաստանի ճնշուած ժողովրդի իրաւունքներու պաշտպանութիւնը խնդրած են։ Այս երկու կուսակցութեանց համերաշխ գործակցութենէն կրնանք մեծ օգուտներ սպասել։

— Թուրք կառավարութիւնը երկու կարգ րէտիֆներ ի զէն՝ կոչած է, պետութեանց Կ. Պոլսոյ ներկայացուցիչները Բ. Դռնէն բացատրութիւն պահանջած են։ Հակառակ խաղաղութեան ժողովի ձգտումներուն Օսման կառավարութիւնը իւր զինուորական ույժը նուազեցնել չուզեր։

— Եգիպտոսէն պաշտօնական հեռագիր մը կը ծանուցանէ թէ՝ չորս օրէ ի վեր Աղեքսանդրիոյ եւ Եգիպտոսի ո՛ եւ է քաղաքի մէջ ժանտախտի դէպք չէ պատահած։

— Հեռագիր մը կը ծանուցանէր թէ՝ Պուլանըխի գաւառին շուրջը քիւրտերը հինգ հայկական գիւղեր յափշտակած եւ 800 հայեր սպաննած են։ Ստոյգ է թէ հոն խռովութիւններ ծագած են, բայց մանրամասնութիւններ կը պակսին։

— Սերպիոյ մէջ աղմկայոյզ խռովութիւններ ծագած են եւ Դանուբի եզրաքաղաքներու մէջ զինուորական օրէնքը հրատարակուած է։ Միլանօ Թագաւորին կեանքին դէմ դաւադրողները արմատական կուսակիցներն են։ Բազմաթիւ ձերբակալութիւններ կը լինին ամեն օր։ Ս. Բէթէրպուրկի Սերպ. Դեսպանը դաւադրութեան իբր մասնակից կասկածելի նկատուելով հրաւիրուած է Պէլկրատ, ուր դատի պիտի ենթարկուի։ Արմատականաց օրկան «Օճէկ» թերթը խափանուած եւ խմբագրապետը խիստ հարցաքննութեան ենթարկուած է։ Դաւադրութեան իբր մասնակից ձերբակալուողներու մէջ կղերականներ ալ կը գտնուին։

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

Գրական եւ Գիտական Ամսաթերթ

Փարիզի հայ ուսանողաց ակումբը՝ իրեն գլխաւոր նպատակ ունենալով, հայ ժողովրդին մէջ տարածել գիտութիւնը, պիտի հրատարակէ այս հանդէսը ներկայ Յուլիսէն սկսեալ։

Պիտի խօսի գրական եւ գիտական նիւթերու վրայ. բնագիտութեան եւ կենդանաբանութեան վրայ. ինչպէս նաեւ կենդանաբաշխութեան, բուսաբանութեան, բժշկութեան եւ երկրագործութեան վրայ։ «Համալսարան» մեծ ույժ պիտի տայ գրականութեան. — պատմական, լեզուաբանական, իմաստասիրական, բանաստեղծական գրուածքներ եւ վիպակներ պիտի եւեւին հոն, իրենց կարգին։

«Համալսարան» լայն էջեր պիտի յատկացնէ մանկավարժութեան, համեմատութեան դնելով զանազան մեթոտներ եւ ուղղութիւններ։ Պի՛տի ջանայ առատ նիւթ հայթայթել ինքնազարգացումով եւ մասնագիտութիւնով պարապողներուն։ Նմանապէս տեղեկութիւններ պիտի տայ եւրոպական կրթական հաստատութիւններու վրայ. որպէսզի Եւրոպա մեկնող հայ ուսանողները նախապէս ծանօթանան իրենց ընտրած վարժարաններու ուղղութեան եւ հոն մանել կարենալու միջոցներուն։

«Համալսարան» ամփոփ քննադատութիւններ պիտի ընէ՝ իրեն ղրկուած հայերէն հրատարակութիւններու վրայ։ Երբէք չպիտի զբաղի քաղաքական, կուսակցական եւ առհասարակ այդ կարգի պատկանող խնդիրներով։

«Համալսարան» մէկ խօսքով, պիտ՛ ըլլայ հայ տարրին «ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ը։

«Համալսարան»ի Խմբագրութիւն

«Համալսարան»ի տարեկան բաժնեգինն է, 12 թիւի համար, իւրաքանչիւրը 32 էջ, 10 ֆր. ամեն երերի համար։ — Անյապաղ ստանալ փափաքողները, թերթին հրատարակուած օրէն իսկ, դիմելու են՝

Rédaction du "Hamalsaran", 125 Boulevard St. Michel 125

PARIS

ԽՄԲԱԳ. «ՄԻՈՒԹԻՒՆ»Ի

ԱԹԷՆՔ ՀԱՅԿ. ԱԶԱՏ ՏՊԱՐԱՆ